ՄԱՆԿԱՎԱՐԺ

№№ 7 – 8 ՅՈՒԼԻՍ ՕԳՈՍՏՈՍ 1898

№ № 7—8.

Լալկան երեխայ (*պատկեր*)։ Ուղէն ուր էր... Հ.։ Ընխարհի բարիքը աշխարհում կրմնայ. Յար. Թումանեանց։ Կաթը, խաշիլը և մոխրագոյն Մուռանը (*Ռոման*) Դ. Մամին-Սիբիրեակից. *Թարգմ.* Ջ. Տէր—Դրիգորեան։ Շարաճի մանուկները զամբիւղում (*պատկեր*)։ Փոքրիկ Հեղինէն.—Սոֆիա Տէր—Ստեփանեան։ Առաս տարի (*ոտանաւոր*). Սիմէօն Սավարեանց։ Փոքրիկ հերոսը (Անդերսէնից). Հ. Ըրզումանեանց։ «Ընմեղ թիթիռնիկը»—Բազբատ։ Քաղցած ճուտիկներ (*պատկեր*) Մանուկ (*ոտանաւոր*) Փրկրկիկ Գէրքէլի.—Պաւրան։ Ուղար դատաւոր. *Թարգմ.* Յ. Միրիմանեան։ Ծպտեալ Սուլթան (*Պոլս. լեզուով*) (*վերջ*) Աստպետ։

Տեղագրական ճամակաճի

Ժ.Ջ. Ընձանաղրութիւններ. Ն. աբ. Տէր—Աւետիքեան։

Չ ա ր ճ ա լ ի f

Համառօտ բաղմապատկութեան երեք կանոնները.—Հ. Նիկ.։

Հանելուկներ։

Ողբիւրի պոստարկղ

Գալիաց Երեխայ

ԳԵՏԱԿԵՐՊԱԶԱՐԴ ՄԱՆԿԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
եւ յաւելած դաստիարակների համար
XVI ՏԱՐԻ №. № 7—8 ՅՈՒԼԻՍ ՕԳՈՍՏՈՍ 1898 Թ.

ԱՐԴԵՆ ՈՒՇ ԷՐ...

—

Թէ հայրիկիս եւ մայրիկիս փոքր ժամանակ էէի սիրուհի

*բայց երբ մեռանիս
ես որբ մնացի այն
ժամանակ սասիկ
պղջացի...*

Չ. Ե.

ԱՇԽԱՐՀԻ ԲԱՐԻՔԸ ԱՇԽԱՐՀՈՒՄ ԿԸՄՆԱՅ

—

ատս է պատմել, ես չեմ յօրինել—
Տատիս էլ նորա պապն է ասել.
Մինչև օրս էլ բերանից բերան
Պատմում են իրար, թէ ինչպէս արքան
Իր անթիւ գանձը համարել չէր կարում,
Իր առատ ոսկու չափը չէր ւիշում:
Էհ, այնքան փողեր, ոսկի ու գոհար
Հաշւել, համարել ով կը կարենար?
Նայում էր գանձին չւարած արքան
Ու չէր իմանում, ինչ անէր նորան:
Վերջը մտածեց չինել իր համար
Մի չքեղ պալատ, հիացնել աշխարհն,
Որ մեծ ու պատիկ ամեն տեղից գան,
Բերանները բաց՝ նայեն, չըլանան:

—

Եւ ահա անցաւ հինգ թէ վեց տարի,
Երբ վարպետները հմուտ և արի
Պալատի չէնքը իսպառ վերջացրին,
Շքեղ ապարանք հրաշակերտեցին։
Ապարանք էր դա և ոչ ձեր գիտցած,
Այլ ըսքանչելի մի բան չըտեսնւած!
Պատերը արծաթ, յատակը մարմար,
Օճորքը ոսկի, չուրջը անգին քար.
Իսկ սիւների վրայ գեղեցիկ նախշած
Գոհարները էին կարգերով չարւած,
Որ մէկը գրեմ?... Ըզմայլում էր մարդ,
Երբ նայում էր այդ տան չքեղազարդ!

—

Պալատի չէնքըն աւարտած օրին
Իր ողջ պետութեան բոլոր ծերերին
Կանչում է արքան, մեծ խնճոյք սարքում
Ու մուզիկայով չատ քէֆ է անում։
Ճաշից յետ արքան դիմեց հիւրերին
Ու կարծիք հարցրեց պալատի մասին.
Ամենքը հերթով սկսեցին յայտնել
Իրանց զարմանքը ու չէնքը գովել։
Այդպիսի մի չէնք իր ամբողջ կեանքում
Ոչ ոք չէր տեսել արար-աշխարհում.
Այդպիսի պալատ դեռ չէր կառուցւած,

Ոչ տեսնւած բան էր և ոչ էլ լսւած։
«Ողջմած արքայ,— նկատեց մի ծեր,—
Բոլոր հիւրերդ տւին գովեստներ,
Այս չքեղ չէնքով երկար հիացան.
Բայց ապարանքիդ մի պակասութեան
Մասին մոռացան, ոչինչ չ՛ասացին—
Խոչոր պակասը չընկատեցին։
Խօսք չըկայ՝ լաւ է, լաւ է ու սիրուն,
Ոչ մի թագաւոր չունի այդպէս տուն,
Սքանչելի է!... բայց... ունի դռներ!
Ախ, երանի թէ՛ այդ այդպէս չըլնէր!»

—

Յանկարծ ամենքը բարձրացրին քըթիչ,
Ծաղրով, ծիծաղով թնդացրին դահլիճ.
«Վի՞զըդ չըկոտրի, տխմար ծերունի!
Առանց դռների ախար տուն կըլինի?
Այ, աղբաթըդ խէր, բերան ես բացում
Ու այդպէս ցանցառ բաներ ես խօսում?»
—«Հասկացէք խօսքըս,— ասաց ծերունին,—
Զուր էք ծիծաղում!... թէ չըլինէին
Ահա այս դռները, այնժամ մեր արքան
Այստեղ կըմնար, այստեղ յաւիտեան.
Բայց երբ մի օր նա աւանդի հոգին,
Հրաժեշտ պիտի տայ չքեղ պալատին.

Այս գոհարները, անգին քարերը,
Հարստութիւնը, բոլոր գանձերը
Նա պիտի թողնի պալատում թափած,
Իսկ ինքը մենակ դագաղում պառկած,
Պատանած երկու աչքին կլտաւով,
Պիտի դուրս գնայ ահա այս դռնով!..
Դու մեզ զարմացրու, արքայ քաջարի,
Ոչ թէ պալատով, այլ գործքով բարի!..»
Լռեց ծերունին, մռայլեց արքան,
Տիրեց լռութիւն զերեզմանական...

Ցարտիւն Թումանեանց

ԿԱԹԸ, ԽԱՉԻԼԸ ԵՒ ՄՈԽՐԱԳՈՅՆ ՄՐՈՒԱՆԸ

(Ա ռ ա կ)

Դ. Մամին—Սիբիրեակ'ի.

I

Նչ ուզում էք—ասացէք, շատ զարմանալի էր! Իսկ ամենից զարմանալին այն էր, որ միևնոյն բանը կրկնւում էր ամեն օր: Այո, հէնց որ խոհանոցում հնոցի վրայ դնում էին կաթով լի կճուճը և խաշիլով լի փոքրիկ կաթսան, իսկոյն սկսւում էր: Սկզբից կանգնած են, կարծես թէ ոչինչ, իսկ յետոյ սկսւում է խօսակցութիւնը:

—Ե՛ս կաթ եմ...

—Իսկ ես—խաշիլ...

Սկզբից խօսակցութիւնը կամաց է լինում, վստահոցով, իսկ յետոյ խաշիլն էլ, կաթն էլ սկսում են աստիճանաբար զրգուել:

—Ես կաթ եմ!

—Իսկ ե՛ս—խաշիլ...

Խաշիլը ծաճկում էին խուփով, և նա պառաւի նման վինթվինթում էր իր կաթսայի մէջ. իսկ երբ սկսում էր բարկանալ, պղպջակը վեր էր բարձրանում, պայթում էր և ասում.

—Հայց և այնպէս ես խաշիլ եմ... փո՛ւմ!

Այդ պարծենկոտութիւնը կաթի համար շատ վիրաւորական էր թւում: Ասացէք, խնդրեմ, ինչ չըտեսնւած բան է, —որ և է խաշիլ! Կաթը սկսում էր զրդռւել, փրփուրը բարձրանում և աշխատում էր դուրս թափւել իր կճուճից: Չէնց որ խոհարարուհին ուշքը մի փոքր ուրիշ բանի էր դարձնում, —յանկարծ կաթը թափւում էր տաքացած հնոցի վրայ:

—Ա՛խ, այդ կաթը!—գանգատւում էր ամեն անգամ խոհարարուհին:

—Չէնց որ ուշքդ մի քիչ ուրիշ կողմ ես դարձնում, խսկոյն ելնում է:

—Ի՞նչ անեմ, երբ ֆլօսկիսի դիւրազրգիռ բնաւորութիւն ունի!—ինքն իրան արդարացնում էր կաթը:—Ես ինքս ուրախ չեմ, որ բարկանում եմ: Թեռ խաշիլն էլ միշտ պարծենում է. ես խաշիլ եմ, ես խաշիլ եմ, ես խաշիլ եմ... Իրան համար նստել է կաթսայի մէջ և վինթվինթում է, ես էլ բարկանում եմ:

Գործը երբեմն այնտեղ էր հասնում, որ խաշիլն էլ ելնում էր կաթսայից, չընայած որ խուփ ունէր,—Հէնց այնպէս սողում էր հնոցի վրայ և կրկնում էր.

—Իսկ ես խաշիլ եմ, խաշ.. խաշ.. խաշշշշ!

Ճիշտ է, այդ բանը յաճախ չէր պատահում, բայց և այնպէս պատահում էր, և յուսահատ խոհարարուհին կըրկրնում էր.

—Ախ, այդ խաշիլը!... Ինչի չի նստում իր կաթսայի մէջ, զարմանալի է...

—

II

Խոհարարուհին, առհասարակ, շատ անգամ էր յուզւում: Սենք յուզելու էլ պատճառներ կային... Օրինակ, որքան էր նեղացնում Մռռանը! իմացած եղէք, որ դա մի շատ գեղեցիկ կատու էր, և խոհարարուհին շատ էր սիրում նրան: Ամեն առաւօտ Մռռանը ընկնում էր նրա ետևից և մլաւում էր այնպիսի խղճալի ձայնով, որ քարասիրտ մարդն անգամ չէր կարող տանել:

—Ա՛յ քեզ անկուշտ արարած!—զարմանում էր խոհարարուհին, հեռացնելով կատուին:—Երեկ օրքան լերդ ես կերել միայն:

—Չէ որ դա երեկ է եղել.—Մռռանը նոյնպէս զարմանում էր:—Այսօր ես կրկին ուզում եմ ուտել... միա՜ ու-ռ...

—Մկներ բռնի՛ր և կե՛ր, ծույլ-անպիտան!

—Չա՛, հեշտ է ասել. դու ինքդ փորձէիր թէկուզ մէկը բռնելու,—արդարանում էր Մռռանը:—Կարծեմ, ես բաւական աշխատում եմ... Օրինակ, անցեալ շաբաթ ո՛վ էր բռնել մուկը. ո՛վ է ճանկռել իմ քիթը: Ա՛յ, ինչպիսի մեծ մուկ պիտի բռնէի, բայց նա ինքը քիթս ճանկեց... Հեշտ է ասել—մկներ բռնի՛ր!

Լերդով կշտանալուց յետոյ Մռռանը նստում էր վառարանի մօտ մի տաք տեղ, աչքերը փակում և անուշ մրափում էր:

—Տեսնո՞ւմ ես—օրքան է լափել!—զարմանում էր խոհարարուհին:—Կողքի վրայ է ընկել և աչքերը խփել ծույլ-անպիտանը... Սրի և միս տո՛ւր սրան:

—Ի՞նչ կըհրամայես, միս չո՞ւտեմ,—արդարանում էր Մռռանը, մի աչքը բանալով:—Ես դեռ ձուկ էլ եմ սիրում ուտել... Նոյն իսկ շատ դուրեկան է ձուկ ուտելը: Մինչև հիմա չեմ կարողանում ասել, որն է լաւ—լերդը, թէ ձուկը: Փաղաքավարութիւնից մէկն էլ եմ ուտում, միսն էլ... Եթէ ես

մարդ լինէի, անպատճառ կամ ձկնորս կը լինէի, կամ լերդ վաճառող: Աշխարհիս բոլոր կառուներին այնպէս կը կերակրըէի, որ լաւ տրզէին, ինքս էլ միշտ կուշտ կըլինէի...

Լաւ կշտանալուց յետոյ՝ Մռռանը իր զարճուրթեան համար սիրում էր զբաղուել կողմնակի բաներով: Օրինակ ինչի մի երկու ժամ չընստել պատուհանի վրայ, ուր կախուած էր վանգակը՝ մէջը մի սարեակ: Զատ հաճելի է նայել թէ ինչպէս է թռչկոտում չլմայր թռչնիկը:

—Ես քեզ լաւ եմ ճանաչում, պառաւ խաբեբայ!—ճւաց վերևից սարեակը:—Պէտք չըկայ ինձ վրայ նայելու:

—Իսկ եթէ ուզենամ ծանօթանալ քեզ հետ:

—Գիտեմ, թէ ինչպէս ես ծանօթանում դու... Ո՞վ էր, որ այս քանի օրերս մի իսկական կենդանի ծիտ կերաւ: Ո՛ւհ, զզւելի!...

—Ես բոլորովին զզւելի չեմ. ընդհակառակը՝ ինձ ամենքը սիրում են... Արի՛ ինձ մօտ, մի հեքիաթ պատմեմ:

—Ա՛յ դու խաբեբայ... Ի՛նչ ասել կուզէ, լաւ հեքիաթաբան ես! Տեսայ, թէ ինչպէս էիր հեքիաթներ պատմում տապակած ճուտին, որ գողացար խրհանոցից... Լա՛ւ, ես!

—Դո՛ւ գիտես, քո բաւականութեան համար եմ ասում: Ինչ վերաբերում է տապակած ճուտին, ես ճշմարիտ է, կերել եմ, բայց չէ որ նա, մլեւնոյն է, ուրիշ բանի պէտք չէր:

III

Մինչև այլոց Մռռանը ամեն առաւօտ նստում էր խոհանոցի վառուած հնոցի մօտ և համբերութեամբ լսում էր, թէ ինչպէս են կռւում կաթն ու խաշիլը: Նա ոչ մի կերպ չէր կարողանում հասկանալ, թէ ինչի համար են կռւում, և միայն աչքերը բացուխուփ էր անում:

—Ես կաթ եմ:

—Ես խաշիլ եմ, խաշիլ, խաշիլ, խաշշշշ...

—Չեմ հասկանում, բոլորովին ոչինչ չեմ հասկանում,—

ասում էր Մռռանը։— Ինչի՞ բարկանալ։ Օրինակ, եթէ ես կրկնելու լինիմ—ես կատու եմ, կատու եմ, կատու եմ, կատու եմ... Սրիթէ որ և է մէկը պիտի վիրաւորւի... Ո՛չ, չեմ հասկանում... Հայդ, պէտք խոստովանել, ես կաթին առաւելութիւն եմ տալիս, մանաւանդ երբ նա չի բարկանում։

Մի անգամ կաթն ու խաշիլը շատ սաստիկ հրւեցին, այնպէս որ կիսով չափ թափւեցին հնոցի վրայ, և սարսափելի հոտ բարձրացաւ։ Ներս վազեց խոհարարուհին և միայն ձեռքերն իրար զարկեց։

—Հիմա ինչ պիտի անեմ,—գանգատւում էր նա, հնոցից վերցնելով կաթն ու խաշիլը։— Չի կարելի մի երկու քայլ հեռանալ!...

Մի կողմ դնելով կաթն ու խաշիլը, խոհարարուհին գնաց շուկայ՝ մթերքները առնելու։ Մռռանը այդ հանգամանքից օգտւեց։ Նա նստեց կաթի մօտ, փչեց նրա վրայ և ասաց.

—Ա՛յ կաթ, խնդրեմ չըբարկանաս...

Կաթը նկատելի կերպով սկսեց հանգստանալ։ Մռռանը պոոյտ տւեց նրա շուրջը, մի անգամ էլ փչեց, բեխերը սղալեց և բոլորովին քաղցրութեամբ ասաց.

—Տեսէք ինչ եմ ասում, պարոննե՛ր... Առհասարակ կրւելը լաւ բան չէ։ Ինձ հաշտարար դատաւոր ընտրեցէք, և ես իսկոյն կըքննեմ ձեր գործը...

Ձեղքի մէջ նստած սև միջատը խիստ ծիծաղելուց սկսեց հազալ. «Ա՛յ քեզ հաշտարար դատաւոր!... Չա՜-Հա՜ պա՛ռաւ խաբեբայ. հիմա էլ տես ինչ է մտածում!»... Հայդ կաթն ու խաշիլը ուրախ էին, որ իրանց վէճը, վերջապէս, պիտի քննւի։ Նրանք նոյն իսկ իրանք չէին կարող պատճել բանի էութիւնը, թէ ինչի՞ են կռւում։

—Լաւ, լաւ, ես բոլորը կըքննեմ!—ասաց Մռռան կատուն, բարձրանալով այն դարակը, որի վրայ դրած էր կաթի կճռւճը.—Ես հոգիս չեմ ճախի... Դէ՛, սկսենք կաթից։

Նա մի քանի անգամ պտոյտ տւեց կաթի կճռւճի շուրջը,

փորձեց նրան իր թաթիկով, վերևից փչեց կաթի վրան և սկսեց լակել:

—Կարո՜ղ!—բղաւեց միջատը:—Նա բոլոր կաթը կըլակէ, և կըմտածեն, թէ ես եմ արել:

Երբ խոհարարուհին վերադարձաւ շուկայից, տեսաւ, որ կճուճը դարդակ է: Մռռան կատուն վառարանի մօտ քնած էր անուշ քնով, կարծես թէ ոչինչ չէր պատահել:

—Ախ, դու անպիտան! հայհոյեց նրան խոհարարուհին, քաշելով ականջից:—Ո՞վ խմեց կաթը, ասա՛:

Թէև շատ էր ցաւում ականջը, բայց Մռռանը ձևացրեց թէ ոչինչ չի հասկանում և խօսալ չըգիտէ: Երբ նրան դռնով դուրս նետեցին, նա թաւփ տւեց իրան, լիզեց տրորւած մազերը, պոչը ուղղեց և ասաց.

—Եթէ ես խոհարարուհի լինէի, բոլոր կատուները առաւօտից մինչև երեկոյ կաթ կըխմէին: Բայց ես չեմ բարկանում իմ խոհարարուհու վրայ, որովհետև նա այդ բանը չի հասկանում....

Ջ. Տէր—Գրիգորեան



ՓՈՔՐԻԿ ՀԵՂԻՆԷՆ

—

Յուլիսեան առաւօտ էր։

Արեւը իր ճառագայթները տարածել էր ամեն կողմ։ Առաւօտեան ցօղով լցւած դալար խոտը տաքացել էր արեւի ոսկեգոյն ճառագայթներից և փայլում էր զմրուխտի նման։ Թաղիկները օրօրւում և խոնարհւում էին դէպի գետին։ Ամբողջ բնութիւնը խաղում էր։ Մի հոյակապ տան պատշգամբի վրայ երեւաց-վեց տարեկան փոքրիկ Հեղինէն՝ իրանից տարբի ու կիսով մեծ եղբօր—Սօսի հետ։ Երեխաները իրանց պառաւ դայեակի և գանգուրիկ սեւ շնիկի հետ գնում էլին այգի։

Հեղինէն և Սօսը հարուստ ընտանիքից էին։ Նրանց հայրը, որ ճառայում էր քաղաքային վարչութեան մէջ, շատ էր սիրում ու փայփայում իր միակ որդկանց։ Հեղինէի մայրը, 35 տարեկան մի գեղեցիկ տիկին, պահպանում էր իր փոքրիկներին և ուղեկցում

էր նրանց զբօսանքների ժամանակ։

Հեղինէն և Սօսը ձեռք ձեռքի բռնած՝ վազում են ճանապարհով։ Հեղինէի երկնագոյն շորը ծածկւեց թփերի ետև. միայն ընդհանուր լուռ թեան մէջ հազիւ տարածւում էր նրա բարակ, զրնգուն ձայնիկը, որի հետ միախառնւում էր և Սօսինը։ Երեխաները, բաւական վազվզելուց յետոյ, սկսեցին ծաղիկներ քաղել։ Արդէն մի մի մեծ փունջ էին կապել, բայց և այնպէս դեռ չէին վերջացրել իրանց գործը։ Սօսը ձանձրացաւ կռանալուց և իր քրոջը կանչեց հիւղը։ Ո՜րքան մեծ եղաւ նրանց զարմանքը, երբ դայեակի փոխարէն նրանք տեսան իրանց մայրիկին։ Հեղինէն առաջինը վազեց ընկաւ նրա գիրկը և խնդրեց, որ պսակ հիւսէ իր համար։

—Հեղինէ, սիրելիս, չէ՞ որ ասացի քեզ, թէ չըգիտեմ։

—Մայրիկ-ջան, ինչպէս որ է՝ հիւսիր։

—Դէ լաւ, տուր։ Ա՛խ դուք, երեխաներ, երեխաներ,— հառաչելով փնթփնթաց Հեղինէի մայրը։

Երեխաները ուղղեցին իրանց սևորակ աչքերը դէպի մօր ձեռքերը և սկսեցին հետևել նրանց ամեն մի շարժումին։ Պսակները պատրաստ են։ Հեղինէն նրանցից մէկը դրեց իր գլխին։ Նրա շագանակագոյն մազերը շուտ-շուտ դուրս էին թափւում պսակի տակից և զարդարում նրա փոքրիկ ճակատը։ Երեխաները երկար վազվզում և խաղում էին այգում։ Վերջապէս, մայրը սկսեց նրանց տուն կանչել։ Հեղինէի համար դժւար էր բաժանւել սիրելի այգուց։ Բայց չէ՞ որ պէտք է լսել մայրիկին։ Եւ նրանք դիւրութեամբ դարձան տուն։ Երեխաները տանը ուրախ խաղում էին։ Բայց երկար չքտևեց նրանց ուրախութիւնը։ Տիկնիկներն էլ ձանձրացրին. ինչ անել հիմա։

—Ա՛յ թէ ինչ, Հեղինէ, գնանք հայրիկի առանձնասենեակը, այնտեղ շատ հետաքրքիր բաներ կան։

—Շատ լաւ կըլինի,—ասաց Հեղինէն, ուրախութիւնից ծափ տալով և թռչկոտելով։ Մի րոպէ անցած երեխաները արդէն խառնել էին սեղանի վրայի բոլոր թղթերը։ Կրկին չըգի-

տեն ինչ անել: Մտածմունքի մէջ ընկած՝ նրանք նայում էին իրանց շուրջը. յանկարծ Հեղինէն թոզ նկատեց սեղանի վրայ:

—Հայրիկս սիրում է, որ ամեն տեղ մաքուր լինի: Անսպասելի ուրախութիւն պատճառեմ նրան:

Այդ մտքով ուրախացած՝ Հեղինէն վերցրեց աւել և սկսեց թոզը թափ տալ սեղանի վրայից:

—Հեղինէ, ասաց Սօսը,—նայիր այնտեղ. չե՞ս նկատում մոմակալի մօտի թոզը:

—Ես ինքս էլ եմ տեսնում, բայց չեմ հասնում:

—Ա՛յ, դու փոքր ես, իսկ ես, նայիր, հասնում եմ. մի տուր ինձ:

—Ո՛չ, ո՛չ. ես հիմա հասայ,—ասաց Հեղինէն և մեկնեց դէպի Սօսի ցոյց տւած տեղը: Բայց դժբախտութիւն պատահեց. աւելը դիպաւ մոմակալին, որն ուղիղ ընկաւ Սօսի ճակատին: Սկզբից Հեղինէն վախեց և նետեց դէպի եղբայրը: Բայց վերջինս լաց չեղաւ, թէև ճակատը մի փոքր ուռել էր: Երեխաները միասին ծիծաղում և ասում էին.—ա՛յ, քեզ անսպասելի ուրախութիւն:

Մեր նկարագրած անցքից յետոյ անցաւ մի տարի: Սօսին ուղարկեցին Թիֆլիս երրորդ գիմնազիօնը, իսկ Հեղինէն դեռ խաղում էր տանը: Մի անգամ առաւօտեան, Սօսը ուսումնարան գնալուց յետոյ, Հեղինէն նստեց տիկնիկի խաղալու: Բայց նրա մազերը դեռ գզգլած էին, այդ պատճառով տիկնիկը ձգեց յատակի վրայ և գնաց Հայելու մօտ, որ կարդի բերէ իր գանգուրները: Սենեակի դուռն մօտ Հեղինէն նկատեց յատակ սրբելու խոզանակը:

—Ա՜խ, այդ անտանելի Մարթան միշտ այստեղ է թողնում խոզանակը:

Ջուտով աղջկայ գլուխը կարդի էր բերւած, որից յետոյ նա վերցրեց խոզանակը և սկսեց սրբել յատակը:

—Մարթան միշտ գանգատւում է, թէ յոգնում է, սակայն բոլորովին դժւար չէ աղախին լինելը: Դեռ չէր վերջացրել խօսքը, յանկարծ մեծ ու հաստ խոզանակը դուրս պրծաւ փոքրիկ աղախնու ձեռքից և դիպաւ Հայելուն: Ապակին փշրւեց, և լուսամուտների մէջ տեղի դեղեցիկ Հայելու կտորները թափւեցին տախտակամածի վրայ:

Այդպիսի անխոնջ աղախին լաւ է, բայց շատ թանկ է նստում:

Սոֆիա Տէր—Մեհրաճեան



ԱՐԱՏ ՏԱՐԻ

—

Եկաւ ամառ
Ճաճանչավառ,
Եկաւ փառքով,
Ոսկի կառքով,
Բարի վարքով,
Կարգ ու սարքով.
Եկաւ շողով,
Ալմաստ ցօղով,
Յորդ անձրևով,
Փաղցր արևով.
Անթիւ բարիք-
Կեանքի կարիք
Բերաւ-թափեց՝
Աշխարհ լըցրեց։
Խոտը-հարած՝
Դէզեր դըրած,
Արտը հընձած՝
Խոտեր կապած.
Հունդը՝ առատ,
Պտուղը՝ շատ.
Ցորեն, վարսակ—
Միատեսակ՝
Կըտան հատիկ—
Հարիւրապատիկ։
Տանձ ու խընձոր՝
Ջաքարաճոր,
Սալոր, ծիրան՝
Փոշին վըրան։
Դեղձ՝ դեղնաճ,
Թաւիշ հագած,
Թուխթը՝ անուշ,
Թուզը՝ քընքուշ.
Նուռը՝ շըքեղ,
Սեխը՝ համեղ.

Ձըմեռուկը՝
Հիւթով լիքը...
Իսկ քո առաջ.
Գեղակարկաչ
Գետն է հոսում,
Հետըդ խօսում,
Ամեն փոսում
Եւ ակօսում
Կեանք ես տեսնում՝
Ջիծաղ լըսում:
Հեռուն նայես,
Սարը կանաչ.
Ականջ ղընես՝
Թռչնոց կառաչ,
Եզանց բառանչ,
Սայլի շառաչ:
Որ կողմն նայես,
Գէմքըդ շըրջես.
Հարուստ բաղեր,
Ձըմրուխտ թաղեր,
Անմեղ խաղեր,
Ե՛րգ ու տաղեր...
Իսկ գիւղացին,—
Փառք Արարչին.
Կալի մէջին՝
Ձեռքը կողքին,
Աչքը հասկին՝
Կայ խընդագին...

Սիմէօն Սափարեանց

ՓՈՔՐԻԿ ՀԵՐՈՄԸ

«Դա է ճշմարիտ հերոսը,
որ պատրաստ է մեռնել
ուրիշի համար։»

Փոքրիկ Անդրէասը կարճահասակ, աշխոյժ, համարձակ, բնաւորութեամբ հետաքրքիր տաս և մէկ տարեկան գիւղացի տղայ էր. իր Հայրը հասարակ բանուոր էր, որի օրավարձով ապրում էր ընտանիքը. Անդրէասը ամենաւայ երեք կամ չորս ամիսը հազիւ գլխարկ ծածկելու բախտ ունենար, իսկ ամբաւայ միւս եղանակներին գլխաբաց էր պտտում. նա բաւականանում էր իր խոպոպ շագանակագոյն մազերով, որոնք գլխարկի պակասը լրացնում էին. իր մարմինը հազիւ ծածկող հագուստները ցընցոտիներ էին, բայց նա երբէք չէր տրտնջում, գիտէր որ իր աղքատիկ ծնողները դրանից աւելին չէին կարող։

Անդրէասի հօր խրճիթը երեք վերստ հեռու էր գիւղական դպրոցից, և ամեն առաւօտ պարտաւորւած էր վաղ վերկենալ, ցնցոտիները հագնել, շտապ-շտապ նախաճաշ ուտել և վազվազ գիմել դպրոց, որ դասերից ետ չըմնայ. իր դասընկերների մէջ առաջին աշակերտն էր և շնորհիւ իր հետաքրքիր բնաւորութեան՝ բոյսերի, կենդանիների, թռչունների,

բնութեան պէսպէս երեւոյթների մասին շատ բան գիտէր, քան սպասելի էր իր տարիքից:

Բայց, փոքրիկ ընթերցողներ, թերեւս դուք ասէք այս պատմւածները սովորական բաներ են և—կամ ինչ հերոսութիւն կարելի է սպասել ցնցոտիներով հագնւած գիւղացի Անդրէասից. մի փոքր համբերեցէք. ադամանդը սկզբում կոպիտ, անպէտք քարի մէջ է լինում թագնւած, բայց մեծ աշխատութեամբ յղկելով է, որ ստացւում է թանկագին քարը. այսպէս էլ այն ցնցոտիների տակ է պահւած Անդրէասի ճշմարիտ հերոսութեան սիրտը:

Անդրէասի հօր խրճիթի մօտից անցնում էր երկաթուղու գիծը. նա շատ անգամներ իրանց խրճիթից դիտում էր վայրաշարժի (engine) փորից անընդհատ բղխող ծուխ ու շոգին սիւնակը, լսում էր նրա ահռելի, ականջ խլացնող սուլոցը և իր ձեռքի շարժումներով բարի ճանապարհ մաղթում հադարաւոր ճանապարհորդներին:

Մի առաւօտ՝ դպրոց գնալիս, Անդրէասը նկատեց որ բէլօբ-երկաթէ շաւիղը տեղից խախտւած է. նա թէև շատ բան չգիտէր երկաթուղու մասին, բայց ուշադրութեամբ դիտելով և համեմատելով գուղընթաց բէլսի հետ, մի անկանոնութիւն տեսաւ, որ իր կարծիքով այդպէս լինել չէր կարող. մի անգամ դասին ուսուցիչը հարցրել էր իրանց, թէ ինչպէս գնացքները գծից դուրս ցատկելով՝ խորտակւել ու հարիւրաւոր ճանապարհորդներ՝ մարդիկ, կանայք, երեխաներ սարսափելի մահով մեռել են. ճիշտ այս մտածմունքի մէջ էր, յանկարծ մի խուլ ձայն հասաւ ականջին. Անդրէասը կասկածեց, մի դուցէ գնացքը լինէր. և լսածը ստուգելու համար չոքեց, ականջը մօտեցրեց բէլսին և հասկացաւ որ գնացքի շրխկ-շրխկոցն էր. դժբախտ ճանապարհորդները հետզհետէ մօտենում էին...

Թէև ես մի փոքրիկ տղայ եմ, մտածեց նա, բայց թերեւս կարող եմ գնացքը այս խախուտ տեղին չհասած կանգ-

նեցնել. դպրոց գնալուց առել՝ այս պարտքը ճանրացաւ իր վրայ և որոշեց տնել ինչ որ կարող էր:

Այս որոշման վրայ իր փոքրիկ սիրտը սկսեց ուժգին և արագ-արագ բաբախել. Անդրէասի մտքովն անգամ չանցաւ, որ կարող էր ինքը սպանուել, նա գնաց վնասուած տեղի մօտն ու մօտը՝ բէլսի մէջ տեղ ուղիղ կանգնեց, երկու փոքրիկ ձեռքերը բարձրացրեց և սպասեց առաջացող գնացքին:

Յառաջ, յառաջ շրխկ-շրխկալով աւելի և աւելի մօտենում էր գնացքը... Ինժիները դէպի արանքում կանգնած երեխային հեռւից նկատելով՝ սուլեց որ դէից դուրս գնայ. Անդրէասը մաղաչափ տեղից չշարժուեց: Ինժիները կրկին և կրկին սուլեց. Անդրէասը քալէ արձանի պէս մնաց անշարժ՝ իր անթարթ նայուածքը ուղղած դէպի գնացքը, և ինժիները ստիպուեցաւ գնացքը դանդաղեցնել և Անդրէասի դէմ ու դէմը՝ մի քանի քայլ հեռու բոլորովին դադարեցնելով, վայր ցատկեց և ցասկոտ աչքերով առաջացաւ դէպի երեխան. գնացքը ուշանում էր և նա սաստիկ բարկացել էր այս յանդուգն տղայի վրայ. Անդրէասը հանդարտ, ուրախ ժպիտն երեսին տեղնուտեղը սպասում էր իր վրայ առաջացող վայրենի, հրացայտ աչքերով ինժիներին. այս միջոցին իր փոքրիկ սիրտը հպարտ ուրախութեամբ ուռած էր և նրա համար փոյթ չէր այն մի քանի կոպիտ հարուածը, որ, նախ քան իր արածի վրայ դիտել տալը, ստանալու էր նրանից, բայց ինժիների սաստիկ բարկութիւնը փոխուեցաւ ուրախութեան, երբ տեսաւ, որ փոքրիկ հերոսը փրկել էր իր հարիւրաւոր ճանապարհորդների կեանքը:

Այս տարօրինակ դէպքի վրայ, հետաքրքիր ճանապարհորդները դուրս թափուեցան վագոններից՝ տեսնելու թէ ինչ է այս անակնկալ դէպքի պատճառը. տեսան... որ եթէ Անդրէասը կանգնեցրած չըլինէր գնացքը, վագոնները գէից դուրս թռչելով իրանք էլ հետը չարդ ու փշուր պիտի լինէին, և տեսնելով եղածը, սարսափահար, գունատուած՝ ետ-ետ քաշուե-

յան. պահ մի ընդհանուր լռութիւն տիրեց, բայց տիկինները հետզհետէ աղէտի վախից սթափւելով՝ արտասւաթոր աչքերով մինը միւսի ետևից հեծեծելով մօտենում, ցնցոտիներով հագած Անդրէասին սեղմում էին իրանց կրծքին և համբոյրներ դրոշմում աչքերին, ճակատին, թշերին ու գանգուր մազերին. իսկ տղամարդիկ, մէկ աչքը դարձնելով իրանց կնիկների և երեխաների և մէկ էլ իրանց և նրանց ազատարար քաջասիրտ հերոսի վրայ՝ երախտագիտութեան արտասուքն աչքներում մրմնջում էին «Աստուած օրհնի քեզ, քաջասիրտ հերոս»: Այս էր բոլորը. նրանք զրպաններից հանեցին քսակները և ինչ որ ունէին տալին՝ երեխային, ոչ թէ փոխարինելու նրա արածը—նրանք գիտէին, որ իրանց կեանքները պարտ էին նրան—այլ գործով ցոյց տալու իրանց երախտագիտութիւնը, որ խօսքերը անզօր էին արտայայտելու:

Ապա նրանցից իւրաքանչիւրը իր տետրակում Անդրէասի հասցէն գրելուց յետոյ, աւելացրին. «Այսուհետև մեր մնացեալ կեանքը պարտ ենք քաջասիրտ, բարի, անձնուրաց փոքրիկ հերոսին:»

Այն օրից անցել է 30 տարի, տակաւին Անդրէասը ապրում և նոյն գծի վրայ ինժիների պաշտօն է վարում. իր պատկառելի դէմքը, զգայուն բարի սիրտը, իր վեհ նայուածքը յիշեցնում են իր մանկութիւնը և իր հերոսական գործը առաջների շարքն է անցել. «Ինժիների կեանքի ճոգածուն, ինժիներ կը լինի:»

Էդոգռն Թարգմ. անգ. Ա. Արզումանեանց

Չարաճճի մանուկները զամբիւղում

ԸՆՄԵՂ ԹԻԹԵՒՆԻԿԸ

ալահունեայ գաւառին Սուրէնաշէն աւանին մօտ կայ մի լճակ։

Նրա վճիտ մարգարտափայլ մակերևոյթին ժրպտում են երկնքի գեղածիծաղ կապոյտը և արևի ոսկեփայլ թափանցիկ ճառագայթները։

Այդ լճակին գիւթական և դմայլիչ պատկերը քաշում է իրան, բնութեան հրապոյրներին սիրահար ահագին ամբոխ մը մօտակայ և հեռաւոր գիւղերից։

Հոն այցելողներից բոլորն էլ տեսած են անշուշտ մի աղջիկ, և ճանաչում են նրան։

Գեղանի Նւարդն է դա։

Գզգզած հագուստով, բոբլիկ ոտներով, մազերը անխնամ ուսերին թափած, մտախոհ և լուռ։ Լճակին եզերքը անշարժ արձանացած, մելամաղձոտ նայուածքով, աչքերը սևեռած ջրի մէջին, կարծես փնտռում էր մի բան։

Չէք աղջկան վարդագոյն, բայց նուաղած շրթունքներից ստէպ մրմունջ է բարձրանում։ «Ջարեհ, Ջարեհ». մի գեղեցիկ անուն լսելի է լինում։

Ափսոս, ասացին ինձ թէ այդ հրեշտականման աղջիկը, այդ անմեղ հոգին, շատ վառն արկածի մը պատճառով, խելքը կորուսեր է, աւելի անմեղ արարածի մը հոգեկան հաճոյք մը ընծայելու, ձգտումին մէջ:

Սրանից մի քանի տարիներ առաջ, հէնց Հաղիւ ութ տարու կար Նւարդը, իր փափուկ և նուրբ ձեռքերով գրկում և գգւում էր, սիրեցեալ մինիկիկ եղբօրը՝ Զարեհին:

Այդ գողտրիկ մանուկը, մօր մը խանդաղատանքով պարուրած, երբէք չէր ուզում հեռացնել գրկիցը:

Ձատ անգամ ծնողքը ստիպում էին նրան՝ տանել, զբօսցնել մանուկը, խաղալ կապուտակ լճակին եզերքը:

Ուշիմ և խելացի Նւարդին պատւիրել աւելորդ էր, եղբօրը՝ Զարեհին, երբէք առանձին չթողնելու համար:

Պայխսի ոսկեփայլ և ծաղկածին առաւօտ մը էր, այն գեղեցիկ օրից մին, որ բնութիւնը մաղնիսացնում է մարդը, թարմ և քնքուշ օդ ծծելու տենչով տանից դուրս նետելու:

Նւարդը գրկած իր հոգեակ Զարեհը, զբօսացնում էր լճակին կանաչ և փափուկ խոտերով զարդարուն ափին վրայ:

Հազարաւոր թռչնիկները ճուռղում էին իրանց քաղցրիկ երգերով: Առաւօտեան հրաշալի զեփիւռը, իր անուշ շնչովը, շոյում էր ծաղիկների և բոյսերի ջինջ ճակատները:

Թիթեռնիկները, բնութեան այդ խայտաճամուկ հրաշալիքները, ոստոստում էին ծաղկից-ծաղիկ, բոյսից-բոյս:

Յանկարծ նրանց մին, շուշանի չափ քնքուշ և սպիտակ, թառած էր Զարեհին փոքրիկ ափին վրայ:

Մանուկն ուրախութիւնից խելայեղ անմեղ ժպիտով, բերկրալից ձայնով՝ ուզում է բռնել այդ սիրուն թիթեռը, բայց Հաղիւ մատնաճայրով դպչում է նրան, թիթեռը թափ տալով, ոլորապտոյտ թռիչքով ծածանում է օդին մէջ, երբեմն հեռանալով և երբեմն մանուկին ճակատը շոյելու չափ մօտ գալով:

Ջարեհ, ուրախ ճիչերով պահանջում է քոյրիկից սպիտակ թիթեռը, անթարթ աչքերով հետևելով և մատնանիշ անելով նրան։

Նւարդ մանուկը զրկումը, աշխատում է գոհացնել իր եղբօրը, չանքերը սակայն զուր անցնում են, չարաճճի թիթեռը զգալով կարծես իրան գոհւիլը, խոյս է տալիս հազար ու մէկ ելևէջներով, և խաբուսիկ ծածանումներով, յուսահատեցնելով շընչասպառ աղջիկը։

Պանուկի աւիւնից յափշտակուած Նւարդը, խոհեմութեան սահմանից դուրս է գալիս. Ջարեհը զրկիցը վար դնելով դալար խոտերին վրայ, սլանում է թիթեռի ետևից։

Բայց հազիւ մի քանի վայրկեան վազվզել էր, չանկարծ ջրի ճողփիւն մը զարթեցնում է իր ուշը, և շտապում է Ջարեհի քով։

Բայց աւաղ, Ջարեհը անհետացել էր։

Ջաւիվայրի վրայ դրուած մանուկը, ճիգ անելով ոտքի կանգնել ուզած էր, ինքն էլ թիթեռի ետևից վազել ցանկալով։

Պողպջուն և անվարժ քայլերի անհաւասարութիւնից, ցած էր գլորւել լճակի խորութեան մէջ։

Չանկարծ սոսկումի և անհուն վշտի մը բացագանչութիւնը պատռում է թշւառ քրոջը կոկորդը. բայց առանց շւարելու եղնիկի մը արագութեամբ սլանում է գիւղ, և ձայն է տալիս գիւղացիներին եղբօրը ազատութեան փութալու համար։

Գիւղացիների չանքերը, ափսոս, սիրուն մանկան դիակը կարողանում են դուրս բերել անդունդ լճիցը։

Կակուղ, կանաչ խոտերի վրայ դրուած, անհուն կսկիծ և մորմոք պատճառող այդ սառը դիակը, տեսնելով դժբախտ աղջիկը, գրկում է և պինդ սեղմած իր տաք և մերկ կրծքին վրայ, շնչովը ուզում է կենդանացնել։

Թշւառ աղջկան շրթունքներից դուրս է թռչում միայն «Ջարեհ - Ջարեհ» հեծեծանքի լի ձայնով։

Եւ բոլորովին խելայեղ նւազում է, առանց զրկիցը վար դնելու անկենդան դիակը, աւելի պինդ փակելով և սեղմելով նրան իր կրծքին։

Բագ—Բաս

Մ Ա Ն Ո Ւ Կ

(Ֆրիդրիխ Գեբբելից)

Ծաղիկներով լաւ զարդարւած,
Մօրը դրած են դագաղում,
Իսկ մանուկը սաստիկ ապշած
Ծաղիկներին է նայում.
Սպիտակ շորի վրայ—վարդեր,
Սգաճաղկունք—մազերում,
Որ չէր քաղած նա իր կեանքում,
Ոչ անտառում, ոչ դաշտերում:
Եւ նա հնչիւն, քնքշիկ ձայնով
—Մայրիկ, մայրիկ—թոթովեց.
—Ընճայլիր ինձ դու քո ձեռքով,
Մի ծաղիկ այդ քո կրծքից:
Զըսպասելով պատասխանին,
Մանուկն այսպէս մտածեց.
—Նա քնած է և երբ զարթնի,
Կըտայ ինձ այդ ծաղիկներից:
Թաթիկների վրայ քայլեց,
Անձայն-կամաց դուրս գնաց,
Կրկին անգամ սենեակ վազեց,
Իմանալու... չէ զարթնած:

Գաւառաց



ԸՐՔԸՐ ԳԸՏԻՈՐ

Լժիրի քաղաքներից մէկում ապրում էր մի դատաւոր. սա զարմանալի արդարութեամբ դատում էր դանգատաւորներին: Սրա անունը, որպէս արդար դատաւորի, հեռու աշխարհներ էր տարածւել:

Ալժիրի թագաւոր Հառւկասը անձամբ ուզում էր համոզւել թէ արդեօք ուղիղ էր, ինչ որ լսում էր այդ դատաւորի մասին, ուստի Հազաւ վաճառականի հագուստը և ուղևորւեց դէպի այն քաղաքը, ուր ապրում էր այդ նշանաւոր դատաւորը:

Քաղաքի մուտքի մօտ մօտեցաւ նրան մի մուրացկան և ողորմութիւն խնդրեց նրանից: Հառւկասը ողորմութիւն տւեց և ճանապարհը շարունակեց, բայց մուրացկանը բռնեց նրա հանդերձից և էլ թող չէր թողնում:

--Էլ ինչ ես ուզում, հարցրեց Հառւկասը, խօմ տւի ինչ որ խնդրում էիր: Ճիշտ է, ողորմութիւն տւիր, պատասխանեց մուրացիկը, բայց մի խնդիրս էլ պիտի կատարես, տար ինձ մինչև Հրապարակ, ապա թէ ոչ ուղտերը և ձիաներն ինձ ոտնակոխ կանեն: Հառւկասը նստեցրեց նրան իր մօտ, ձիու վրայ և տա-

բաւ մինչև Հրապարակ, այդտեղ Բաուկասը ձին կանգնեցրեց, բայց մուրացկանը չիջաւ։

—Իջիր, խօմ բերի քեզ Հրապարակ. ասաց Թագաւորը։

—Ես ինչու պիտի իջնեմ իմ սեփական ձիուց, և շատ էլ զարմանում եմ, որ դու չես իջնում. Հա՛, չըլինի թէ ձիս ուզում ես սեփականացնել, պատասխանեց մուրացկանը։

— Ձին իմն է, եթէ սիրով չես տալ, դատաւորի մօտ կըտանեմ։

Այդ վեճի ժամանակ ժողովուրդ Հաւաքւեց դրանց շուրջը և նայում էր սրանց կռւին. վերջը ամենքը. բացականչեցին «գնացէք դատաւորի մօտ, նա ձեզ կըդատի արդարապէս»։ Բաուկասը և մուրացկանը գնացին դատաւորի մօտ. դատարանում կային շատ գանգատաւորներ։ Մինչև հերթը կըհասնէը Բաուկասին, դատաւորը Հարցրեց մի գիտնականի և գիւղացուն, թէ ինչու համար են եկել։

—Գիւղացին ասաց. «Այս աղջիկը իմ կինն է». իսկ գիտնականը պնդում է թէ իմն է։

Դատաւորը մի փոքր մտածելուց յետոյ ասաց. «Թողէք աղջկան այստեղ և վաղը եկէք»։

Երբ սրանց ճանապարհ դրեց, ներս մտան մի մսավաճառ և իւղավաճառ. մսավաճառը արիւնոտ էր, իսկ իւղավաճառը իւղոտ։ Մսավաճառն ասաց.

—Ես այս մարդուց առայ իւղ. Հանեցի քսակս, որ վճարեմ, իսկ սա յարձակւեց վրէս և ուզում էր խլել քսակս. ուզդակի եկանք քեզ մօտ. ես ունիմ ձեռքին բռնած քսակս. իսկ սա բռնել է իմ ձեռքս, բայց փողերը իմս են, իսկ սա գող է։

Իւղավաճառն ասաց. «Այդ բոլորը սուտ է. դա եկաւ ինձ մօտ իւղ առնելու. երբ որ կշռեցի իւղը, դա Հանեց ոսկին և խնդրեց, որ մանրացնեմ. ես մանրած փողը դրի արկղի վրայ. սա ուզեց փախցնել փողերս, դեռ ոսկին չըտւած. ես յարձակւեցի, բռնեցի և իսկոյն բերի քեզ մօտ»։

Դատաւորը մի փոքր մտածելուց յետոյ. «Թողէք փողերն այստեղ և էգուց եկէք»։

Երբ հերթը Բաուկասին հասաւ, սա պատմեց իր գլխի անցածը, ապա դատաւորը մուրացկանին հարցրեց.

—Դու ինչ կասես:

Մուրացկանը պատասխանեց.

—Ես ձիով քաղաք էի գալիս. սա, մատնացոյց անելով Բաուկասի վրայ, գետնին նստած խնդրեց ինձ նստեցնել ձիուս վրայ. ես նստացրի և բերի մինչև իր խնդրած տեղը, բայց սա այլևս չիջաւ և ձիս էլ սեփականացնում է:

Դատաւորն ասաց. «Թողէք ձին այստեղ և էգուց եկէք»:

Երկրորդ օրը բաւականին բազմութիւն էր եկել դատարան:

Դատաւորն սկսեց գիտնականի և գիւղացու դանդատով:

—Տար կնոջդ, ասաց դատաւորը գիտնականին. գիւղացուն ձաղկել 50 անգամ դալար ճիպոտով: Գիտնականը տարաւ իր կնոջը տուն. իսկ գիւղացուն տեղն ու տեղը սլաւժեցին:

Ապա կանչեց դատաւորը մսավաճառին.

—Փողերը քոնն է. ասաց նա մսավաճառին. իսկ դառնալով դէպի իւղավաճառն ասաց.

—Սրան հարւածել 50 անգամ:

Վերջը կանչեց Բաուկասին և մուրացկանին:

—Կարող ես ճանաչել դու քո ձին քսան ուրիշ ձիաների մէջ, հարցրեց դատաւորը Բաուկասին:

—Կարող եմ:

—Իսկ դո՞ւ:

—Ես էլ կըճանաչեմ, ասաց մուրացկանը:

—Եկ հետս, ասաց դատաւորը Բաուկասին:

Գնացին գոմը. Բաուկասը իսկոյն ճանաչեց իր ձին քսան ուրիշ ձիաների մէջ: Դրանից յետոյ դատաւորը ներս տարաւ մուրացկանին և ասաց.

—Ապա ցոյց տուր ձիդ:

Մուրացկանը նոյնպէս նոյն ձիու վրայ մատնացոյց արեց:

Դատաւորն եկաւ նորից իր տեղն և ասաց Բաուկասին.

Փաղցած՝ ճուտիկներ

— Ձին քոնն է, տար, մուրացկանին 50 անգամ ձաղկել:

Դատաւորը վերջացնելով դատը՝ գնաց տուն. Բաուկասն էլ հետևեց նրան:

— Ինչու ես հետևում, դժգոհ ես վճռից, հարցրեց դատաւորը:

— Ո՛չ, ես գոհ եմ ձեր վճռից, պատասխանեց Բաուկասը, միայն ուզում եմ իմանալ թէ ինչպէս իմացար, որ այն աղջիկը գիտնականի կինն էր և ոչ գիւղացու, որ փողը մսավաճառինն էր և ոչ թէ իւղավաճառինը և վերջապէս, որ ձին իմս էր և ոչ թէ այն մուրացկանինը:

— Աղջիկը, որ գիտնականի կինն էր, այ ասեմ ինչպէս իմացայ. առաւօտեան ես այն աղջկանը կանչեցի և պատուիրեցի, որ իմ թանաքամանումս թանաք աճի: Նա տարաւ թանաքամանը, շուտով լւաց և առանց թափելու աճեց սիրուն կերպով մէջը թանաք. կընշանակէ նա սովոր է այդ տեսակ գործեր կատարելու. իսկ եթէ այն աղջիկը գիւղացու կինը լինէր, չէր կարող օրինաւոր կերպով պատէրս կատարել, ուստի և եղրակացրի, որ նա գիտնականի կինն էր: Իսկ թէ փողը ո՛ւմն է, այ այդ էլ ինչպէս իմացայ. փողերն աճեցի ջրով լի բաժակի մէջ. առաւօտեան, որ նայեցի, տեսայ երեսին ճարպ չի գցել. փողը, որ իւղավաճառինը լինէր, իւղոտ կըլինէր, իսկ ջրում իւղ չըկար, ուրեմն մսավաճառն ուղիղ էր ասում: Ձիու պատմութիւնն աւելի դժւար էր, որովհետև մուրացիկը 20 ձիու մէջ այն ձին այնպէս ճանաչեց, ինչպէս և դու. բայց ես ձեզ գոմ տարայ ոչ թէ նրա համար, որ տեսնեմ թէ ձեզանից ո՞րն է ճանաչում ձիուն, ոչ, ընդհակառակն, ես ուզում էի իմանալ, թէ ձեզանից որի՞ն կըճանաչի ձին. երբ դու մօտեցար, ձին գլուխը շուռ տւեց դէպի քեզ և քո կողմը քաշւեց. իսկ երբ մուրացկանը մօտեցաւ՝ ես նկատեցի, որ նա ականջները սրեց և պատրաստւեց աքացելու. ահա դրանով էլ իմացայ, որ ձին քեզ է պատկանում:

Լսելով բոլորը, Բաուկասն ասաց դատաւորին.

— Ես ոչ թէ վաճառական եմ, այլ Բաուկաս Թագաւորը,

ես եկայ իմանալու արդեօք իսկապէս ուղիղ էր ինչ որ քո մասին պատմում էին: Ահա այժմ կատարելապէս համոզւեցի, որ դու արդար դատաւոր ես. խնդրիր, ինչ ուզում ես և ես կը-կատարեմ:

Դատաւորը պատասխանեց.

—Ոչ մի նւէր ես չեմ ուզում, նրանով էլ երջանիկ եմ, որ իմ թագաւորիս դովեստին էլ արժանացայ:

Թարգմ. Ցար. Միրիմանեան

Ծ ՊՏԵԱԼ—ՍՈՒԼԹԱՆ

(Պոլսական լեգենդա)

—

Հպտեալները առաջանալով շարունակեցին իրանց քայլերը դէպի Էյուբ և որովհետև սաստիկ յոգնած էին, մտան մի զայֆէխանայ (սրճարան) թէ հանդըստանալու և թէ ժողովրդի կարծիքները լսելու: Սրճարանատէրը այս անծանօթ յաճախորդներին իսկոյն աթոռ տւեց, վազեց սառն ջուր բերեց, մօտերը դրեց, որ ծարաւները յագեցնեն և ինքը մօտեցաւ օջախին սուրճ պատրաստելու: Սրճատանը մեծ բազմութիւն կար. մոլլաներ, արհեստաւորներ, կալւածատէրեր, թաղական պաշտօնականներ, ենիչէրիներ և բոլորն էլ անտարբեր զբաղած էին իրանց զբօսանքով, ծխում էին չիբուխ, կամ նարղիլէ, խմում էին սուրճ, կամ օշարի, խաղում էին նարդի, դամա,

կամ թուղթ և շատերն էլ ընտանեկան խօսակցութեամբ էին զբաղած և քննադատում էին առօրեայ հարցեր:

— Ահա՝ երեք օր է, ասաց մի կալաճատէր իրան լսողներին, մեր սուլթանի գահ բարձրանալը, (Ալլահը երկարացնէ նրա կեանքը,) բայց ոչ մի ձայն չըլսեց, ոչ մի գործ չըտեսաւ:

—Երէկ իրիկուն Թոփ—Գափու մի սրճարանում նրան տեսնողներ եղել են...

—Ի՞հ, ասաց սրճատատէրը օջախի մօտից, դատարկախօսներ էք, ուրիշ ոչինչ: Թողէք մի հանգստանայ, ծանօթանայ գործերի հետ... Երեք օրւայ մէջ ի՞նչ կարող էր անել...

—Փրագլուխ և եռանդոտ մարդը հէնց առաջի օրից կարող էր իր շնորհքը ցոյց տալ, ասաց մի ենիչէրի խաղը ընդմիջելով: Մի թէ քիչ գործեր կան մեր քաղաքում: Ահա քանի ամիս է, որ մեզ ուղտի նման խմոր են ուտացնում փռնչիները. այն էլ ի՞նչ խմոր, գարի է թէ հաճար՝ Ալլահն է խաբար:

—Այդ բոլորը կարդի կըմտնի, ասաց մի մոլլա, եթէ մեր կաշառակեր իւլէմներին (դպրեր) ու զաղիներին (դատաւոր կրօնական) կարողանայ դասել:

—Ի՞նչ անեն իւլէմներն ու զաղիները, երբ ընդհանրապէս այնպիսի շռայլութիւն ու վարթամութիւն է տիրում մեր աւազանի ապարանքներում: Երկիրը կողոպտում են, ժողովուրդը կեղեքում, կաշիներ են պոկում, օրըին ու այրուն տանջում, զըրկում, որ ի՞նչ է, իրանց հարեմները հարճով, ընդունարանները մանկլաւիկներով լցնեն: Ամեն մի աչքի ընկնող պաշտօնականի տունը եթէ օրական չիսուն—ութսուն ոչխար է մտնում, էլ մեզ նման աղքատն ու տնանկը ո՞րտեղից մի կտոր լէշ գտնի, որ մանր ու խոշորին կերակրէ:

Ամեն կողմից վարչութեան դէմ տրտունջներն ու գանգատներն անպակաս էին, այնպէս որ մինչև սուրճ խըմելն ու հանգստանալը սրճատան յաճախորդները ապրուստի ամեն մի նիւթի մասին իրանց նեղ վիճակն արտայայտեցին

նախատելով վաշխառու դատաւորներին և անարժան պաշտօնակալներին: Երբ ծպտեալները պատրաստւում էին հեռանալու, նարդի խաղացողներից մէկը խաղն աւարտելով վեր կացաւ ու հարցրեց հանդիսականներին.

—Նոր բան լսացել ջք.

—Ի՞նչ, ասացին ամեն կողմից և հայեացքներն ուղղեցին:

—Բախալները իրանց դատը տարել են, և զարձեալ թըլթու ձախելու արտօնութիւն են ձեռք բերել:

—Ինչպէ՞ս, կրկնեցին նորից հանդիսականները ուշադրութեամբ նորութիւնը լսելու:

—Չէ որ Խոթամբօլի զաղին երեք հազար ղուրուշ թլթուձախներից առնելով, վճիռ էր տւել, որ այլ ևս բախալները թլթու չըձախեն:

—Այդ յայտնի է, երեք-չորս ամսւան պատմութիւն է, նորն ասա, յետո՛յ:

—Բախալները հաւաքւում են և հինգ հազար ղուրուշ դումարելով դիմում են նոյն զաղուն, որ իրանց կրկին թոյլ տայ թլթու ձախելու: Այդ դումարով զաղին գրաւում է և բախալների առաջնորդին սովրեցնում է, որ գնայ մի քանի յղի կանայք ուղարկէ իրան, զաղի մօտ գանգատւելու: Բախալները հինգ-տաս յղի կանանց սովորեցնում են, որ գնան զաղի մօտ գանգատին, թէ իրանք պատճառաւոր են և յաճախ գիշերւայ մէջ սրտերը այլ և այլ թլթու է ուզում: Թլթուձախ ամեն թաղում չըլինելով, եղածներն էլ սաստիկ հեռու լինելով, նրանք վնասւում են, ուշքերն անցնում է և կարող են աւելի մեծ վտանգի ենթարկւել, եթէ զաղին իր ապօրինի կարգադրութիւնը չըվերցնէ և թոյլտւութիւն չըտայ, որ բախալներն էլ թլթու ձախեն: Զաղին այդ գանգատաւոր կանանց խնդիրքի համաձայն նորից վճիռ է արձակում, որ բախալներն էլ իրաւունք ունենան թլթու ձախելու, քանի որ բնակարանների մօտ թլթու չըլինելու պատճառով կարող են վնասւել յղի կանայքն ու նրանց մանուկները:

Սուլթանն այդ պատմուվթիւնը լսելով զայրացած դուրս եկաւ սրճատնից և Խոջայի հետ ուղղուեցին դէպի պալատ։ Դեռ շատ չէին հեռացել էյուբից և նոր էին մտել կենդրոնական քաղաքամասը, որ պատահեցին մի սիմիտչի բոշնակի, որն առանց մոռածելու անգամ, թէ իր խռպոտ ձայնը կարող է աշխարհում մի որ և է անհատի զայրացնել, կանչում էր անվերջ—Սիմիտ, սիմիտ սիմիտ... Քանի կանչում էր բոշնակը, ամբողջ մարմնով դողում էր սուլթանը և երբ մօտեցան իրար՝ Սուլթանն ուշի ուշով քննեց դրա հագուստն ու կապուտը և նկատելով սիմիտչիի չսաների վրայ մի կտոր դեղնոտ տեղ, նա ասաց զայրացած.

—Անօրէն, մէթէ քեզ յայտնի չէ, որ զիմիներդ իրաւունք չունիք ուրիշ գոյներով ղարդարելու։ Ինչի՞ իսլամի կղերին յատուկ դեղին չսաներ ես հագել։

—Խնայիր ինձ, մեղաւոր եմ, դէրվիշ բաբա՛, ասաց դողդողալով բոշնակը։ Աղքատութիւնից ստիպուած հին կօշիկներ գնեցի ու անձամբ ներկեցի—սևացրի։ Տեսէ՛ք, տեսէ՛ք, ասաց բոշնակը կօշիկները հանելով, արդէն բոլորովին սև է, միայն այս մատիս բռնած տեղը բաց է մնացել, չեմ նկատել, չէ սևացել...

—Զայդ, անօրէն, դեռ արդարանալ ես ուզում, ասաց ու ետ նայելով ծպտեալ սուլթանը՝ նշան տւեց հեռւից հետևող ենիչէրիներին ու առաջ գնաց Խոջայի հետ։

Ենիչէրիները իրանց տիրոջ ակնարկը նկատելուն պէս, վրայ հասան, բռնեցին սիմիտչիին, ցրեցին նրա սիմիտները, ոչխարի նման գետնին գլորեցին, պառկեցրին թշւառին, գլուխը կտրելով սիմինտի տէփուրի վրայ դրին, ծածկեցին մի փալասով և հետևեցին իրանց տիրոջը։

Ծպտեալները առանց ետ նայելու շարունակեցին իրանց ճանապարհը, ոլոր-մոլոր, նեղ ու կեղտոտ փողոցներով, մինչև հասան կրկին Լիմօն Իսկէլէն։ Այդտեղ նոյն գինետնից դարձեալ գալիս էին երգի ու նւագարանի խառնաշփոթ ձայները,

Էլի աղմուկն ու գորգոռոցը տարածւել էր ամեն կողմն: Երբ Ծպտեալները աչքերն յառած գինետան դռան կողմը մօտենում էին, մի բարձրահասակ, լիք լիք յոյն, ալբանական ծալովի ֆէսը գլխին՝ դուրս եկաւ փողոց և հսկայ քայլերով դիմեց Ծպտեալների կողմը: Նեղ մայթից առաջ գալիս յոյնին դիմաւորեց մի մոլլա, որին յոյնը ճանապարհ չբռւեց, չիջաւ մայթից փողոց: Անցորդ իսլամ հոգևորականը դիպչելով յոյնին՝ կատաղեց և աղտեղի փողոցային հայհոյանքներով հրամայեց րայաին ցած գալ մայթից և իր արբեցողի գարշահոտ շնչառութեամբ, գինով ապականած վալասներով չապականել նրա անապական մարմինն ու հագուստը:

Յոյնը թէև գինու աղդեցութեան տակն էր, բայց նա լինելով Արշիպելագի կղզիների և ծովի ազատ որդիներից, չդիջաւ, չուզեց լսել մոլլային: Մոլլան չապականուելու համար անճարացած լինքն իջաւ մայթից և սկսեց հրապարակալէս գոռալ, գրգռել ու բորբոքել իսլամ ամբոխին, գանգատելով որ անհաւատը անարգել էր իր արժանապատուութիւնը: Ծպտեալները անցքին ականատես լինելով, սուլթանը կրկին ետ դարձաւ և պատշաճաւոր նշան տւեց իրան հետևող ենիչէրիներին, որոնք յոյնին բռնեցին և քաշէ-քաշ հրելով ու ծեծելով տարան Պալըգ-խանա: Այդ տեղ ծովից դուրս բերւած ձկի նման տարածեցին թշւառ կղզեցուն կոճղի վրայ և լայն բերան կացնով մարմնից գլուխն անջատեցին:

Դեռ յոյնի գլուխը չէին վերցրել յատակից, դեռ նրա լեզուն լփլփում էր բերանում և արիւնը շատրւանի նման ցայտում վզից, երբ Ծպտեալները հասան Պալըգ-խանէի նաւամատոյցը և նշան տւին, որ իրանց նաւակը մօտենայ: Այդ միջոցին Գալաթիայից նաւակը ետ բերեց այն կոկիկ և վայելուչ հագնւած հայ երիտասարդին, որին պատահել էին առաւօտը նոյն նաւամատոյցի վրայ: Դարձեալ նոյն կայտառ շարժումները, նոյն քայլերը և նոյն շռայլ ձախսը. նա մենակ մի նաւակ էր վարձել և ետ էր դառնում: Կատաղութիւնից արիւնով էր

յցւել սուլթանի աչքերը և նա կլորքը չըկարողանալով զսպել, մօտ կանչեց երիտասարդին և քննելով նրա հագուստի երեսն ու աստառն, ներքինն ու արտաքինը, հրամայեց ոտքից սև կօշիկները հանել: Այդ ժամանակ սովորութիւն էր Կ. Պոլսում հիմիկւայ կրկնակօշիկի փոխարէն սև կօշիկներ հագնել և տուն մտնելիս այդ կօշիկները նախասենեակներում թողնելով, ներքին մաշիկներով ներս մտնել թանգագին գորգերով և մետաքսէ թաւիշներով փուաճ, զարդարուած սենեակները:

Երիտասարդը այդ հրամանը լսելուն պէս՝ գունատուեց, ուշքը կորցրեց. բայց բռնութեամբ նրա կօշիկը հանեց մի նաւաստի: Երբ ծպտեալները տեսան կարմիր մաշիկը, սուլթանը զայրալի ասաց.

—Անօրէն, քեզ ով իրաւունք տուեց իսլամի բէգերին ու ամիրներին յատուկ մաշիկներով գարդարուելու և ետ դառնալով երրորդ ակնարկն ուղղեց հետևող դահիճներին ու մտաւ նաւակ, Խոջայի հետ հեռացան:

Դեռ ծպտեալների նաւակը չէր մօտեցել Սարայ-Բուրնու պալատական նաւամատոյցին, երբ ենիչէրիների-դահիճները մտան Գիւլհանէի դռնով պալատի այգին և արքունիքի բոստանչի-Բաշիի առաջ դնելով բոշնակի տէփուրը, բացին ճաճկոցը և երեք անմեղ քրիստոնեաների դլուխը յանձնելով պալատի զօրքերի-պահապանների առաջնորդին, ստացան իրանց վարձքը ինքը իսթանպոլ-ոսկի ու հեռացան:

Ճիշտ տասն և ութ տարի յետոյ, 1808 թ., երբ վէզիր Մուսթաֆա փաշան մի օրւայ մէջ պալատի նոյն պարտիզում խողխողել տուեց երկու սուլթաններին՝ Սելիմ Գ-ին և Մուսթաֆա Գ.-ին, թուրք պատմիչը յիշելով անցեալը՝ աւելացնում է. —Ինչպէս ինքը Սելիմ Գ. անգութ վարուեց գահակալութեան օրերում անմեղ երեք քրիստոնեայի արիւնը հեղելով, նոյնպիսի անողորմ դահիճների ձեռքով թափուեցաւ իր և իր եղբօր որդու արիւնը մի և նոյն ժամում, մի և նոյն պարտիզում...

ԸՐՋԸՆԵԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ԺԸ.

Պատմութեան մի նշանաւոր աղբիւրն էլ կազմում են շէնքերի ու յուշարձանների վրայ եղած գրւածքները: Մեր պատկառելի Հնադոյն Հաստատութիւններից մէկն է Տաթեւի Հազարամեայ վանքը, ուր մեզ Հասած արձանագրութիւններից մի քանիսը դնում եմ այստեղ: Ձննելով երեւաց, որ թւական կրող արձանագրութիւններից ամենից հինն է մի յոյժ սիրուն քանդակած խաչ-քար այս գրերով, միջին երկաթագիր—«Ձտէր Յովհաննէս յիշեցէք ի Քրիստոս, Թիւ (Հայոց)—ՆԼ—430+551—981 թուին փրկչական»: Այս խաչ-քարը այժմ ընկած է գաւթում յատակի վրայ ուրիշ շատերի հետ եւ յայտնի չէ ըստզգրում որտեղ է եղել: Սակայն գլխաւոր տաճարի արեւմտեան պատի մէջ Հազգրած կան չորս, կանգունաչափ, քառակուսի, խոշոր կանոնաւոր քանդակներով քարեր, որոնց գրերը Մեսրոպեան խոշոր երկաթագրեր են, Թէպէտ անթւական, բայց շատ աւելի հին են երեւում. այդ Հակիրճ արձանագրութիւններն են. «Օգնեա մեզ Քրիստոս: ՁՅովհաննէս անարժան քահանայն յիշեցէք»: «Ձհայր Ձապուհ յիշեցէք»: Ձորրորդը եղծւած է: Այժմու Տաթեւի Հազարամեայ տաճարից առաջ էլ Իղած են այստեղ եկեղեցիներ, որոնց քարերից են դրանք, կարելի է կարծել:

Մեծ տաճարի ընկուզեայ դռան վրայ փորագրած է. «Թվ. 2ՌՀ (=702+551=1253 Թիւ փրկչական)—Ես տէր Հայրապետս Ծառայ բարձրելոյն կանգնեցի զդասերն, նորոգեցի զդուռս, զիս յաղօթս յիշեցէք»:

Մի գերեզմանաքարի վրայ, որ այժմ խուցիպատի մէջն է, շատ հին, սկզբնական երկաթագրերով գրած է. «Զհայր Վասակ Հազարապետ յիշեցէք»:

Մի խաչարձանի վրայ գրած է. «Այս նշան փրկական կանգնեալ Յակոբոսէ յանուն սրբուհւոյ Աստուածածնի ի վրքուքիւն եղբաւր իմոյ Աբրահամին, Թվ. պժզ(=814+551 =1365 Թիւ փրկչական»:

Տաթևի մեծ տաճարի կից Հարաւային կողմից, սուրբ Գրիգոր Լուսաւորչի անունով շինած մատուռի դռան ճակատի վրայ կայ այս արձանագրութիւնը. «ի Թվ. ՉԽԴ=744+551 =1291. Ջտէր Ստեփանոս միտրապալիտ Սիւնեաց, որ է պռաւտաւ փրանտէս Հայոց մեծաց, որդի մեծափառ իշխանին Տարսայիճին, շինող սուրբ եկեղեցւոյս յիշեցէք ի Քրիստոս»:

Տաթևում կան երկու քաղցրահնչուն զանգեր. իւրաքանչիւրի քաշն է լինն փութ, մէկի ձայնն է տենոր, միւսը նման է բարիտոնի:

Առաջին զանգի վրայի արձանագրութիւնն այսպէս է. «Թվ. ՉՃԱ—751+551—1302. Լսելի արա ինձ տէր զձայն ցնծութեան և ուրախութեան:

Նիաղենի ծնողեամբ զտէր Ստեփանոս Սիւնեաց զահի՝ կոչես ի փառսդ Հայրենի:

Տէր Ստեփանոս մետրապօլիտ Սիւնեաց, որ է պրօտօֆրանտէս Հայոց»:

Երկրորդ զանգի արձանագրութիւնը այս է. «ՉՃԴ=753 +551—1304. Այս տէր Ստեփան Օրպէլեան մեծաչյան և ուղղափառ պահեալ զաւանդ յեկեղեցիս Հայոց:

Լսելի արա ինձ Տէր զձայն ցնծութեան և ուրախութեան և ցնծասցեն ոսկերք իմ տառապեալ:»

Տաթևի վանքի հարաւային պատի վրայ կան շատ արձանագրութիւններ, որոնք խոնաւութիւնից մաշած դժւար ընթեռնլի են եղած։

Գերեզմանաքարերի գրերը բոլորը ջնջւած են. նորերից մէկի վրայ կարդացւում է այսպէս. «Այս է Հանգիստ տէր Մկրտչին, որ ի լեհաց եկեալ էր աստ սուրբ կրօնեանք առ Տէր փոխեցաւ ԻՒՃ—1100+551—1651»։

Արձանագրութիւններից մեծագոյն մասը փչացել են տգիտութիւնից, վասն զի այդ պատմական քարերը վերցրել են և բանեցրել օրմերի, սալայատակների և սանդուղքների շինութեան։ Այստեղ պտտելով դուք հանդիպում էք ձեր ոտքերի տակ քարերի, որոնց վրայ Մեսրոպեան հին երկաթագրերով գրած է ՅԻՉԵՅԻՔ. պատերում գործ ածւած արձանագրւած քարերի շատ գրերը տաշած են մուրճով։ Այդ դեռ բաւական չէ. հին խուցերը, ժամատունն, գաւիթը, դանգակատունը, բոլորը քանդւած են վերջին տարիներս վառօդով...

Եթէ մեծ տաճարը չքլինէր, կարող էինք վստահ հարցնել. ո՞ւր է Տաթևը. նա այլևս չըկայ. բարոյապէս արդէն նրան փչացրել ենք վաղուց. նիւթական շէնքերը, նշաններն էլ կամաց-կամաց ջնջում ենք. ժամանակ է սթափւիլ։

Ն. աբ. Տէր Ս ւեփիեանց

ՋԻԱՐՃԱԼԻՔ

ՀԱՄԱՌՕՏ ԲԱԶՄԱՊԱՏԿՈՒԹԵԱՆ ԵՐԵՔ ԿԱՆՈՆՆԵՐ

—

Դբըն-Ելբաննա մարոկկացի թուաբանագէտը իր կազմած թուաբանութեան ձեռնարկի մէջ ամբողջ թուերի բազմապատկութեան գլխուն դրել է մի քանի համառօտ գործողութիւններ, որոնց օգնութեամբ մասնաւոր դէպքերում, կարելի է արագ կերպով երկու ամբողջ թուեր իրար հետ բազմապատկել։

Որովհետև այդ համառօտութիւնները չեն դրւած ուրիշ ձեռնարկների մէջ, ուստի օգտակար կըլինի «Աղբիւրի» ընթերցողների համար։ Ահա այդ կանոնները.

Առաջին կանոն. Դիցուք թէ մի թիւ պէտք է իր վրայ բազմապատկել, որի բոլոր թուերը կազմւած են մէկերից, օրինակ 11111×11111, այդ թուերի արտադրեալը կըլինի հաւասար 123454321. Հաւական է միայն գրել արտադրիչներից մէկի գումարը (5), իսկ նրա աջ և ձախ կողմերում գրել նրանից աստիճանաբար փոքր թուեր-4,3,2,1. վերցնենք էլի մի ուրիշ օրինակ, դիցուք 1111×1111. արտադրիչների մէկի գումարն է 4, որի աջ և ձախ կողմում պէտք է գրել աստիճանաբար փոքր թուեր 3. 2. 1. և արտադրեալը կունենայ հետևեալ պատկերը 182 34321•

Երկրորդ կանոն. Դիցուք թէ պէտք է բազմապատկել իր վրայ մի թիւ, որի բոլոր թուանշանները հաւասար են իննի, օրինակ. 99999×99999. այս թուերի արտադրեալն է 9999800001. հերիք է որ գրենք մի հատ 8 և նրա աջ կողմը գրել այնքան զերօ և ձախ կողմն այնքան իննն, որքան թուանշան կայ թուի մէջ առանց մէկի,

իսկ ծայրին գրել 1։ Առնենք մի ուրիշ օրինակ. 999×999. ուրեմն պէտք է գրել 8, իսկ նրա ձախ կողմը երկու հատ իններ, իսկ աջ կողմը երկու զերօ և ծայրին 1, որ և կըստացւի 998001. և իրաւի 999×999=998001։

Երրորդ կանոն. Ինչու՞ք մի թիւ պէտք է բազմապատկել, որի թուանշանները կազմւած են իններից, մի ուրիշի վրայ, որի թուանշանները նման են, միայն արտադրիչների թուանշանները պէտք է հաւասար լինին օրինակ 999×666-ի վրայ։

Բազմապատկելու մի թուանշանը բազմապատկելով բազմապատկչի մի թուանշանի հետ 9×6, կըստանանք արտադրեալ 54. պէտք է արտադրեալի թուանշանները գրել իրարից հեռու. հնգի ձախ կողմը գրել այնքան վեց, որքան բազմապատկչի մէջ թուանշան կայ, առանց մէկին, այստեղ երկու հատ 6, իսկ հինգ աջ կողմը գրել բազմապատկելու և բազմապատկչի տարբերութիւնները (9—6=3) նոյնպէս երկու հատ և կըստացւի արտադրեալ 999×666=665334. բերենք դարձեալ մի ուրիշ օրինակ. 9999×7777։ Արտադրիչներից մի մի թուանշան իրար վրայ բազմապատկելով կըստացւի 9×7=63. գրելով արտադրեալի թուանշաններն իրարից հեռու, պէտք է վեցի ձախ կողմը գրենք երեք հատ եօթը, իսկ աջ կողմը երեք հատ երկու, որպէս իննի և եօթի տարբերութիւն, ուրեմն 9999×7777=77762223։



ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

—

Առաջ. Ղ. Ե. Չ.

20). —Մի կխսէր գիս, ակաջն դիր,
Երկու մասս ալ անպէտ է,
Մին կենդանի կընեղէ,
Մևսն ալ միշտ դարդակ է,
Դարդակ՝ սակայն պտուղ է,
Կամիս մէկ հատ կեր նայէ,
Բայց քնչ հարկ է կխսելու
Ջանա ամբողջ պահելու
Պայծառ դէմքես լոյս կաթէ,
Հարսի մը պէս գիս պաշտէ:

—

Առաջ. Հ. Բաբուրեանցի.

21) Մի բառ գիտեմ, լոկ մի վանկից,
Այն չեմ ասի—որքան տառից—
Մեծ ու ուժեղ՝ ամեն բանից:
Ինչ որ լինի, դէմը ելնող,
Դեռ չէ ծնւել,նրան յաղթող.—
Այն ինչ ինքը երկիր քանդող:
Ագնիւ, հեզ է, անձնանըւէր,

Նա ոչ մի բան, կառնէ նըւէր,
Ինքն անշուննչ, որպէս ստեր։
Ոյժը մեծ է, արար աշխարհ,
Թէ անասուն, թէ մարդ խոնարհ,
Հնազանդւում է որպէս Աստուած։
Լոյսն ու մութը կը խաւարի,
Թէ որ ինքը ոյժը կորցնի
Մարդկութիւնը կըմեռանի,
Վերջ կըլնի ամեն բանի։

Առաջ. 3. Տէր-Մաթեոսեան

22). Մի բառ գիտեմ երեք տառից,
Բայց անբաժան միմեանցից.
Երկու բան է նշանակում,
Գուցէ ոչ ոք չէ հաւատում։
Առաջի մաքով վերցնենք
Մեծ կենդանի է, կըտեսնենք,
Հողի վրայ նա չի ապրում
Եւ ճաղ է ծնում կենդանի։
Փորձենք կարդալ երկրորդ տեսակ,
Երեք եղբօրից է միջնակ,
Գործ է աշում ամեն գրող,
Կարդացողին շունչ պարգևող։

Խմբագիր-հրատարակիչ՝ ՏԻԳՐԱՆ ՆԱՋԱՐԵԱՆ

Типографія К. И. Мартиросіанца, Орб. ул. д. № 1-2.
Дозволено цензурою Тифлисъ, 7 августа 1898 г.

ԱՂՔԻՒՐԻ ՊՈՍՏԱՐԿՂ

Պ. Խրբագիր.

Մինչև հիմա, ես կարդում էի „Աղբիւրը“, համա աչքովս չէի տեսել, որ "Աղբիւրի„ վերջին երեսում "Պոստարկղ„ անունով մի բաժին կայ, թէ չէ վազուց կ'աշխատէի որ մի քան գրեմ: Ես պատահեցի քոյրիկ Աշխէնի նամակին, որ "Աղբիւրի„ № 3-ի վերջին երեսումն էր. կարդացի, պարզ էր գրած, համա չիմացայ թէ նպատակը ինչ ա: Յետոյ մէկին հարցրի, երբ որ պատասխանեց սրտաւ ու լաւ հասկացրեց ինձ բոլորը, ուրախութիւնից յաց եղայ. կարծում էի թէ էս ա, թէ որ ես էլ մի բան գրեմ, կրտպէք. իսկ թէ գրուստ տպէք, էն ժամանակն աւելի լաւ լաւ նամակներ կրգրեմ:

Ասելիքս էս ա. մի մարգ ինձ յայտնեց, որ մեզ պէս փոքրիկ երեխաներին շատ էք սիրում, համա ես էդ քանր չեմ տեսնում. քանի որ դուք մի ալբոմ ունիք տպած, մէջը նկարներ կան, համա երեխի պատկեր և երեխաների մասին սիի բան չրկայ, էդ գիտէք ինչից նա: Էտ նրանից ա, որ դուք երեխաներին չէք սիրում, իսկ եթէ սիրում էք, էդ ժամանակ այ հաւաքեցէք երեխաների պատկերներ, (եթէ ուզում էք դիպ ես կըղրկեմ երեխաների պատկերները, մեր բակում հերիաթ կան ո՞ր) ու մի լաւ ալբոմ տպէք, այ էդ ժամանակ կասեմ որ դուք երեխաներին սիրում էք:

Իմ անունը չեմ գրում նրա համար, որ իմ հասակակից տղաները կասեն թէ "էդ ինչ ես գրել,„ իսկ ես էլ էդ ժամանակ սաստիկ կամաչեմ:

Արտաշէսի եղբայր

—

ԱՂԲԻՒՐԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Թիֆլիս. Առ. եղբայր.—Լաւ հայեցէք Աղբիւրի բոլոր տարիները և կըտեսնէք, թէ որքան շատ ենք տպագրել երեխաների պատկերներ: Ուղարկէք, էլի կըտպագրենք, միայն թէ լաւ նկարագրեցէք այդ երեխաների վարքը, խաղերը:

Աղբիւր-Տարազի գրասենեակում վաճառւում են

	Ր. Կ.
ԱԼԲՈՄ-ԱԼԱՄԱՆԱԽ 4 գոյնով, ազդ. և այլն 101 պատկեր. 2 ր. փոխ.	1 25
ՍԵՍՈՒՆԻ ԿԵՆԴԱՆԻՑ—Ծերենցի Երկուցք IX դարու (սակաւաթիւ) .	2 —
Ղ. ԱՂԱՅԵԱՆՑ. Հանաստեղծութիւններ 1 ր. 50 կ. փոխարէն . .	1 —
ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆՑ. Հանաստեղծութիւններ 60 կ. փոխ. . .	— 30
ՍԻՐԻՆԳ. Բնութեան երգեր և հանաստեղծութիւններ 80 կ. փոխ.	— 50
ՍԱՓՕ.	— 50
Ս. ԻԶՄԻՐԼԵԱՆԻ Ճեհնապակու վրայ պատկերը (սակաւաթիւ) . . .	10 —
ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆՈՒ պատկերը 6 ր. փոխ.	4 —
ՀԵՐԿԱԾՔ, խրօմօ-ակւարել, ՌԱՓՓԱՅԷԼԻ Մադօնաներ, Հրեշտակներ, ԲՈՒՐՆՆՍԻ Յիսուս և Տիրամայր, ՉՔՐՍՊԻՐԻ Խրմէօ-Ջուլիէթ թափանցիկ լուսի դէմ նկար, ընդամենը 8 պատկեր. 2 ր. փոխարէն .	— 60
ՄԻՔԱՅԷԼ ՆԱԼԲԱՆԴԵԱՆՑԻ մեծապիր փօտօ-գրաւիւր պատկերը .	1 20
ՀԱՐՒՄԻ ՂԱՋԻԿԸ ոսկէ շղթաներում	— 50
ՍԱՅՐԻԿԻ ՆՆՋԱՐԱՆՈՒՄ խրօմօ	1 50
ՋՄԵՌ	— 20
ԸՐՏԱՂԷՍ Ե. թագաւորի մուտքը ի Հռոմ.	— 30